

ւագի՛ ունէր այն քարը զոր Յիսուս կը գործածէր իբր սեղան իր օրհնած հացերուն: Միեւնոյն շէնքին կը վերաբերէր այն մողայիքէ յատակը որուն մէկ կտորը գտած է Karge՝ Birkit Ali ed - Dâherի մօտ, որուն վըրայ կը տեսնուէր զամբիւղ մը չորս հացերով՝ որոնց իւրաքանչիւրը աջ ու ձախ կը կրէր ձուկ մը: Դիւրին չէ որոշել թէ ինչ բան հոս տեղականացուցած է այս հրաշալի դէպքը. Յովհաննէս միայն կը յիշէ (Զ. 10) պարագայ մը, այսինքն առատ և վայրի բուսականութիւն մը. («Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն»). Մատթ. ԺԴ. 19, Մար. Զ. 39, ուր կը խօսին «խոտի» և «գալար խոտի» մասին, որուն վրայ նստաւ ժողովուրդը). ստուգիւ բաւական չէր այս ընտրութիւնը հաստատելու համար: Ոմանք կը տարուին ենթադրելու ազդեցութիւն մը այն աւանդութեան՝ որ լեւան քարոզին համար ընտրութիւն կ'ընէ եօթն ազբիւրներու վրայ հաստատուած բլուրը: Խնական կը թուի նոյնացնել լեռը՝ ուր Յիսուս քարոզեց՝ այն լեւան հետ, որուն մօտ հացերու հրաշքը տեղի ունեցաւ (Մատթ. ԺԵ. 29). այս կերպով քարոզի լեռը և հացերու հրաշքի տեղը իրարու հետ միացուած են: Կրնայ ըլլալ նաև, ինչպէս շատ անգամ, այս տեղը չունենայ այս մասին ճշմարիտ աւանդութիւն մը. միայն պարզ փափաք մը պատճառ եղած է ուխտաւորներուն զգացնել այն տեղին մէջ յիշատակը կարևոր դէպքի մը: Պատշաճ է նաև հինգ հազար անձերու հացի հրաշքը այս տեղւոյն մէջ յիշատակելու հաւանական մէկ ազդակը — յարուցեալ Փրկչին երևումը լճին ափերուն վրայ Յովհաննէս ԻՍ.ի համաձայն, աւանդութեամբ կը տրուի եօթն ազբիւրներու մօտ: Ստոյգ է որ այս պարագան բացէ ի բաց կը յիշատակուի 800 թուականէն սկսեալ՝